

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

19 սեպտեմբերի 2017թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:
2. Լուսինե Յուրիկի Սահակյանի՝ ֆարմաբիմիայի և ֆարմակազնոզիայի ամբիոնի հայցորդ ձևակերպման, ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ «α-ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսակտիվության ուսումնասիրությունը» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
3. Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ «Հայաստանի որոշ էնդեմիկ բուսատեսակների ԿԱՄ-երի անջատում, ֆիզիկաքիմիական և բժշկակենսաբանական հետազոտում և դրանց հենքի վրա հալենային պատրաստուկների ստացում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
4. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:
5. 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակում անցկացված «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2017-2018 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով ներկայացրեց ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2017-2018 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, որ գիտական խորհրդի անդամները նախապես ծանոթացել են աշխատանքների պլանի նախագծին՝ դիտողություններ և առաջարկություններ անելու համար: Ա. Դադայանը նշեց, որ առաջարկություն է եղել Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի և ք.գ.թ. Ս. Պետրոսյանի կողմից: Մասնավորապես, վերջիններս առաջարկել են գիտխորհրդի աշխատանքային պլանի մեջ ընդգրկել նաև ուսումնական պլանների հաստատման հարցը: Գիտխորհրդի մյուս անդամները ևս հավանություն տվեցին առաջարկին: Ելույթ ունեցավ գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, ով առաջարկեց ուսումնական պլանների հաստատման հարցը ևս ներառել գիտխորհրդի աշխատանքային պլանի մեջ և հաստատել գիտական խորհրդի 2017-2018 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական խորհրդի 2017-2018 ուս. տարվա աշխատանքային պլանը:

2. Լուսինե Յուրիկի Սահակյանի՝ ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ ձևակերպման, ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ «α-ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսաակտիվության ուսումնասիրությունը» վերնագրով թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի «Հետերոցիկլիկ ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի» գիտահետազոտական լաբորատորիայի լաբորանտ Լուսինե Սահակյանին, ով ներկայացրեց «α-ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսաակտիվության ուսումնասիրությունը» թեմայով աշխատանքի շրջանակներում կատարված

հետազոտությունները: Մասնավորապես նշեց, որ աշխատանքի ընթացքում հետազոտվել են բազմաթիվ հետերոցիկլիկ նուկլեոֆիլներ՝ ամիններ, թիոլներ, բենզիմիդազոլի ածանցյալներ, ինչպես նաև ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում սինթեզված 3-րդ և 4-րդ դիրքերում տարբեր տեղակալիչներ պարունակող 5-թիօքսո-1,2,4-տրիազոլներ: Գրական տվյալների վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ դեղաբանական քիմիայի բնագավառում նշված հետերոցիկլերը համարվում են կարևոր ֆարմակոֆոր և նախընտրելի կառուցվածք ունեցող միացություններ: Դեղագիտության և բժշկության մեջ բենզիմիդազոլի և տրիազոլների ածանցյալները կիրառվում են վաղուց և օժտված են մի շարք թերապևտիկ հատկություններով (հակախոցային, հակահիպերտենզիվ, ցավազրկող, հակաբորբոքային, հակավիրուսային, հակասնկային, հակաքաղցկեղային, հակաբակտերիալ, հակահելմինտային և այլն): Արդյունքում սինթեզվել են (2*S*,3*S*)-*allo*- α -ամինակարազաթթվի 4 նոր անալոգներ՝ (2*S*, 3*S*)- β -[3-(թիոֆեն-2-իլ)-4-պրոպիլ]-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ամինակարազաթթու, (2*S*, 3*S*)- β -[3-բուրիլ-4-(ֆուրան-2-իլմեթիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ամինակարազաթթու և (2*S*, 3*S*)- β -[3-բուրիլ-4-պրոպիլ]-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ամինակարազաթթու, որոնք որպես պոտենցիալ ակտիվ միացություններ կարող են ենթարկվել նախակլինիկական բազմակողմանի հետազոտությունների: Աշխատանքի հաջորդ փուլում իրականացվել է միայն 3-րդ և 4-րդ դիրքերում բուրիլ և պրոպիլ տեղակալիչներ պարունակող 5-թիօքսո-1,2,4-տրիազոլ տեղակալված α -ամինակարազաթթվի ածանցյալի հակաօքսիդիչ և թաղանթակայունացնող հատկությունների պարզաբանում, քանի որ սկրինինգի համար բավարար քանակներով հաջողվել է սինթեզել միայն նշված միացություններից երկուսը, այդ պատճառով հետագա փորձարկումները իրականացվել են այդ նյութերի համար: Ուսումնասիրվել է նաև սինթեզված ամինաթթուների ազդեցությունը ցուլի լյարդի միտոքոնդրիումների, դոնորական արյան էրիթրոցիտների, ինչպես նաև սպիտակ, ոչ ցեղային առնետների թոքային և երիկամային հյուսվածքներից առանձնացված բջջային և ենթաբջջային թաղանթներից (կորիզային, միտոքոնդրիալ) NADPH օքսիդազի իզոմերների գումարային ֆրակցիայի Hb-ով հարուցված արտազատման (ռիլիզինգի) գործընթացի վրա: Այսպիսով,

հաստատվել է, որ սինթեզված նոր (2S, 3S)-β-[3-բուրիլ-4-պրոպիլ]-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ամինակարագաթթուն օժտված է հակաօքսիդիչ՝ ՍՕԴ-նմանակ ակտիվությամբ (կազմում է 20,0±0,2 միավոր/մգ/մլ), իսկ 0,3մգ/մլ կոնցենտրացիայի դեպքում 33,6±4,4%-ով ընկճում է թաղանթային NADPH օքսիդազների Hb-ով ինդուցված արտազատումը, ինչը վկայում է ուսումնասիրվող միացության թաղանթակայունացնող ազդեցության մասին: Ուսումնասիրվել է նաև նոր հետերոցիկլիկ տեղակալված ամինաթթուների հակամանրէային հատկությունները *P. aeruginosa* 5249 և *E. coli* DH5α շտամերի նկատմամբ և ցույց է տրվել որ նրանք չեն ցուցաբերում հակամանրէային հատկություններ: Ամփոփելով իր ելույթը՝ Լուսինե Սահակյանը նշեց, որ հետագա աշխատանքներում կուսումնասիրվի նաև α-ամինակարագաթթվի 2-մերկապտոբենզիմիդազոլային ածանցյալի հակաօքսիդանտային հատկությունը, ինչպես նաև կիրականացվի նման հատկություններով օժտված արդեն լավ հայտնի միացությունների հետ նոր ամինաթթվի համեմատական հետազոտությունների անցկացում: Կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում տպագրվել է 2 հոդված՝ դեղագիտություն մասնագիտությամբ:

Ելույթ ունեցավ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, ով նշեց, որ շուրջ 3 տարի է ինչ Լ. Սահակյանը զբաղվում է α-ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզով, ինչը բավականին բարդ և երկարատև գործընթաց է և պահանջում է մանրակրկիտ հետազոտական աշխատանք: Ա. Սադյանը նշեց, որ Լ. Սահակյանի կողմից սինթեզվել են էնանտիոմերապես հարստացված 5 նոր ոչ սպիտակուցային ամինաթթուներ և իրականացվել է դրանց ՍՕԴ-նմանակ ակտիվության և թաղանթակայունացնող ազդեցության պարզաբանում: Ելույթ ունեցավ նաև կ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, ում մասնավորապես, հետաքրքրում էր, թե ո՞րն է սինթեզված ամինաթթուների ՍՈԴ միմետիկ ազդեցության մեխանիզմը: Լ. Սահակյանը նշեց, որ իր կողմից չի իրականացվել ՍՈԴ միմետիկ ազդեցության մեխանիզմների պարզաբանում, օգտվել է գրական տվյալներից, որտեղ կան հավաստի արդյունքներ այն մասին, որ նմանատիպ կառուցվածք ունեցող ամինաթթուները դրսևորում են այդպիսի

հասկություններ և ելնելով դրանցից՝ իր առջև խնդիր էր դրվել սինթեզել նմանատիպ կառուցվածքով ամինաթթուներ և կատարել դրանց ՍՈԴ միմետիկ ակտիվության ուսումնասիրություն: Ելույթ ունեցան նաև ք.գ.դ. Է. Սեկոյանը, ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ովքեր նշեցին, որ կատարված աշխատանքը արդիական է, կարող է ունենալ և՛ տեսական և՛ գործնական նշանակություն և վերաբերվում է ինչպես կենսօրգանական քիմիային, այնպես էլ դեղագիտության բնագավառին:

Որոշեցին՝

- ✓ Ձևակերպել լաբորանտ Լուսինե Յուրիկի Սահակյանին որպես ֆարմացիայի ինստիտուտի ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի հայցորդ:
- ✓ Հաստատել ատենախոսության թեման՝ « α -ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսակտիվության ուսումնասիրությունը» ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ:
- ✓ Լուսինե Սահակյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ. Ա.Ս.Սադյանին:

3. Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ «Հայաստանի որոշ էնդեմիկ բուսատեսակների ԿԱՄ-երի անջատում, ֆիզիկաքիմիական և բժշկակենսաբանական հետազոտում և դրանց հենքի վրա հալենային պատրաստուկների ստացում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Լսեցին՝ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հալենային և նորհալենային դեղապատրաստուկների լաբորատորիայի վարիչ, ք.գ.դ. Ս. Դադայանին, ով ներկայացրեց Հայկ Պետրոսյանի ատենախոսական աշխատանքի շրջանակներում նախատեսվող հետազոտությունները՝ շեշտելով, որ դրանք ուղղված կլինեն սակավ ուսումնասիրված որոշ էնդեմիկ դեղաբույսերի (կաթնափուշ պուտավոր, նեղատերև խամերոն, երեքնուկ ալպիական, սև քունջութ, բոխի և այլն) տարածման արեալների հետազոտմանը, անհրաժեշտ պաշարների հավաքմանը և նախնական մշակմանը; Ս. Դադայանը նշեց, որ

աշխատանքի ընթացքում կիրականացվի դեղաբուսային հումքերի ֆիտոքիմիական և հանքային բաղադրության հետազոտում, ակտիվ բաղադրամասերի անջատման տեխնոլոգիաների մշակում, հալենային և մասնակի մաքրված նորհալենային դեղապատրաստուկների ստեղծում և ստացված դեղապատրաստուկների բժշկակենսաբանական հետազոտում: Ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ա. Սադյանը, բ.գ.դ. Է. Սեկոյանը, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ովքեր նշեցին, որ նախատեսված աշխատանքը արդիական է մեր հանրապետության համար և ուսումնասիրությունների արդյունքները կարող են հիմք ծառայել նոր, էկոլոգիապես մաքուր բուսական ծագման դեղապատրաստուկների ստացման համար:

Որոշեցին՝

1. Հաստատել Հայկ Ռազմիկի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի որոշ էնդեմիկ բուսատեսակների ԿԱՄ-երի անջատում, ֆիզիկաքիմիական և բժշկակենսաբանական հետազոտում և դրանց հենքի վրա հալենային պատրաստուկների ստացում» ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ:
2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ. Ս. Դադայանին:
4. **Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:**

Լսեցին՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը շարունակելու և Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար մեկ ուսանողի թեկնածության առաջադրման հարցը:

Ելույթ ունեցան՝ Խորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա.Ս. Սադյանը, ով տեղեկացրեց, որ անհրաժեշտ է շարունակել Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի տրամադրումը և Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար «Դեղագիտություն» մասնագիտությամբ բակալավր III կուրսերից ներկայացնել մեկ ուսանողի թեկնածություն: Ելույթ ունեցավ նաև ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը, ով նշեց, որ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ ներկայումս տրամադրվում է «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Պարզևի Մինասյանին,

ով ունի բարձր առաջադիմություն և ցուցաբերում է գիտական և հասարակական ակտիվություն, իսկ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար՝ ԵՊՀ պետական և ավարտական կրթաթոշակներ հատկացնելու կարգի համաձայն, թեկնածու ուսանողը վերջին 4 կիսամյակում պետք է ունենա անընդմեջ գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն, լինի սոցիալապես անապահով ընտանիքից: Ելույթ ունեցողները առաջարկեցին III կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանի թեկնածությունը՝ նշելով վերջինիս բարձր առաջադիմությունը և ակտիվությունը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Շարունակել «Ֆարմացիա» մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Պարզևի Մինասյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Դեղագիտություն» 3-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

5. 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակում անցկացված «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքների քննարկում:

Լսեցին՝ Խորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ստացել են «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Համաձայն արդյունքների, և՛ առկա և՛ հեռակա ուսուցմամբ ուսանողների կողմից ֆարմացիայի ինստիտուտի բոլոր ամբիոնների և դասախոսների գնահատականները բարձր են 4-ից: Ա. Սադյանը նշեց, որ մի շարք ուսանողներ շնորհակալանքի և բարձր գնահատանքի խոսքեր են ուղղել իրենց դասախոսներին: Նա շեշտեց, որ ուսանողները հիմնականում դժգոհում են ԵՊՀ գրադարանում ուսումնական դասագրքերի սակավությունից, առաջարկում են, որ ինստիտուտի գրասենյակում ևս առկա լինեն դասավանդվող առարկաներին վերաբերվող գրքեր՝ դրանց պատճենելու հնարավորություն ունենալու համար: Բացի այդ, ուսանողները առաջարկում են նաև քննական գործընթացն առավել թափանցիկ դարձնելու համար միջանկյալ քննությունները ևս անցկացնել բանավոր կարգով: Ա. Սադյանը նշեց, որ քանի որ հարցումն անանուն է, հետևաբար ուսանողները հնարավորություն են ունեցել առանց վարանելու ներկայացնել իրենց կարծիքները: Այսինքն մեր ուսանողները

ուզում են ստանալ գիտելիք և բարյացկամ վերաբերմունք: Կարելի է նշել, որ մեր ուսանողների բոլոր ցանկությունները օրինական են և դրանք պետք է իրականություն դարձնել:

Որոշեցին՝ Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան